Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 01270000

«Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

«19» մայիսի 2017թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը, որպես բժշկական օգնության և սպասարկման պետական պատվեր տեղադրող (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Նելսոն Զուլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության հիման վրա և «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Լիդա Մուրադյանի, որը գործում է «Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի մայիսի 19-ի թիվ 1644-Ա հրամանը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պատվիրատուի և Կատարողի միջև 2017 թվականի փետրվարի 9-ին կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» թիվ ՀՀ ԱՆ ՊԱԳ-ԾՁԲ-01270000 պայմանագրի հավելված 2-ը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրին կից հավելվածի:

2. Սույն համաձայնագիրը իր հավելվածով կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. Սույն համաձայնագիրը կազմված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկական օրինակ:

4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի և Կատարողի կողմից ստորագրվելու պահից:

ՀՀ ԱՆ աշխատակազմի
ղեկավար՝ Ն.Զուլոյան

Jun 1 2017 11:43 AM

/ստորագրություն/

«Նորք-Մարաշ ԲԿ» ՓԲԸ-ի տնօրեն՝
Լ.Մուրադյան

Digitally signed by MARTIROSOVA IRINA 7007630502
Date: 2017.05.23 17:31:51 GMT+03:00

/ստորագրություն/